ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ
1900-1969

ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ

Նաիրի Զարյանը (Հայաստան Եղիազարյան) 20-րդ դարի հայ գրող է: Նա գրական ասպարեզ մտավ որպես բանաստեղծ: Հետագայում նա հանդես եկավ որպես վիպասան և դրամատուրգ, հրապարակագիր ու թարգմանիչ:

1944-ին Զարյանն ստեղծեց իր մնայուն և արժեքավոր գործերից մեկը՝ «*Արա Գեղեցիկ*» դիցապատմական ողբերգությունը: Մինչ գործին անդրադառնալը հեղինակը լուրջ ուսումնասիրություններ է կատարել, քննել հայ-ասորական հարաբերություններն ու մշակել դիցաբանությունը: Նա գործ ուներ վաղնջական առասպելի հետ, որի նյութը քաղել էր Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունից: Զարյանը փորձում է թափանցել առասպելի խորք, վեր հանել ճշմարտություններ, որոնք, ինչպես հուշում է Խորենացին, դեռևս թաքնված էին:

Արա Գեղեցիկի ու Շամիրամի պատմությունը մոտավորապես մ.թ.ա. 9-րդ դարի, այսինքն՝ հայոց պատմության ուրարտական շրջանի իրադարձությունների մասին է: Զարյանին հաջողվել է, վարպետորեն ներկայացնելով այդ իրադարձությունները, ընթերցողի սեղանին դնել գեղարվեստական հարուստ հյուսվածքով ու համոզիչ կերպարներով մի գործ, որը նրա տաղանդի փայլատակումը եղավ, և որը մինչ այսօր էլ հիացնում է շատերին ու նաև գրավում բազմաթիվ ռեժիսորների ուշադրությունը: Հիմնականում հավատարիմ մնալով Խորենացու մեկնաբանությանը և պահպանելով առասպելի ոգին՝ հեղինակը ցույց է տվել հայ ժողովրդի մաքառումներն ու պայքարը օտար բռնակալների դեմ՝ հմտորեն ներկայացնելով այն սիրո և խարդավանքի պատմությանը միահյուսված:

«Արա Գեղեցիկ» ողբերգության գեղարվեստական արժանիքները շատ են և պայմանավորված են մի շարք գործոններով. գրողը կարողացել է հետաքրքիր կառուցվածքի շրջանակում ստեղծել գերող կերպարներ, ներկայացնել ներքին ու արտաքին, քաղաքական ու հոգեբանական լարված բախումներ և գործին հաղորդել մեծ խոհականություն ու հուզականություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Դիտի՛ր «Բացահայտում» հաղորդաշարի՝ Նաիրի Զարյանին նվիրված փաստագրական ֆիլմը:
   Հղումը՝ https://www.youtube.com/watch?v=5NvIZ2ZxnpQ&t=255s
2. Զարյանի մասին համացանցից գտի՛ր և ուսումնասիրի՛ր այլ նյութեր ևս:
3. Վերհիշի՛ր պատմությունից անցած դասերը Նաիրի Զարյանի ապրած ժամանակաշրջանի մասին:
4. Զուգահեռնե՛ր անցկացրու Զարյանի, Չարենցի ու Բակունցի կենսագրությունների միջև: Ցո՛ւյց տուր ընդհանրություններն ու տարբերությունները:
5. Կարդա՛ «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը:
6. Դիտի՛ր «Արա Գեղեցիկ - Շամիրամ» հեռուստաներկայացումը «Հայոց լեգենդները» շարքից: **Հղումը՝** https://www.youtube.com/watch?v=J0GJVIZ9Ml8&t=351s
7. Համեմատի՛ր սկզբնաղբյուրի՝ «Արա Գեղեցիկ և Շամիրամ» վիպերգի հետ (Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն»):
8. Վենի տրամագրի միջոցով ցո՛ւյց տուր ընդհանրություններն ու տարբերությունները:



9. Ներկայացրո՛ւ ողբերգության կառուցվածքը՝ նշելով արարների վերնագրերը:

Արարներ	Վերնագրեր
1-ին	
2-րդ	
3-րդ	
4-րդ	
5-րդ	

10. Պատմի՛ր բովանդակությունը ողբերգության տարբեր հերոսների անունից՝ Արայի, Շամիրամի, Նուարդի, գինեվարպետ Արբակի կամ վաճառական Կաթմոսի:
11. Ողբերգությունից դո՛ւրս գրիր դիպաշարի փուլերը սկզբնավորող տողերը:



12. Վերլուծի՛ր կերպարները՝ բերելով համապատասխան հատվածների օրինակներ:
13. Ստեղծագործությունից դո՛ւրս գրիր տեղ և ժամանակ մատնանշող բառերը: Այդ բառերով կազմի՛ր բառակապակցություններ՝դրանք գործածելով փոխաբերական իմաստով:

Տեղ մատնանշող բառեր	Ժամանակ մատնանշող բառեր

14.Ներկայացրո՛ւ կերպարների հոգեբանական զարգացմանն ու փոփոխությանը նպաստող հանգամանքները:
15. Վերլուծի՛ր կանանց կերպարները: Համեմատի՛ր Նուարդին և Շամիրամին՝ ցո՛ւյց տալով, թե ինչ հատկանիշների կրող է նրանցից յուրաքանչյուրը: Լրացրո՛ւ աղյուսակը. ձախ սյունակում գրի՛ր առնվազն 6 հատկանիշ, որով, ըստ քեզ, կարող են օժտված լինել այդ կանայք, այնուհետև «+» և «-» նշաններով ցո՛ւյց տուր, թե նրանցից ում է բնորոշ այդ հատկանիշը:

Հատկանիշներ	Նուարդ	Շամիրամ

16. Համեմատի՛ր Արայի և Շամիրամի՝ որպես երկրների տիրակալների կերպարները: Նմանություններն ու տարբերությունները ներկայացրո՛ւ Վենի տրամագրով:
17. Մեկնաբանի՛ր ստեղծագործության գաղափարը: Ի՞նչ է ուզում մեզ փոխանցել հեղինակը:
18. Գրի՛ր հարցերի պատասխանները.

ա) Ի՞նչ խնդիր էր դրված Արա Գեղեցիկի առջև, ո՞ր հատվածում կամ հատվածներում է դա երևում:
բ) Ե՞րբ է ի հայտ գալիս խնդիրը և ի՞նչ հանգամանքներում:
գ) Ովքե՞ր էին խնդիրը մատնանշողները:
դ) Որո՞նք էին այդ խնդրի լուծման ուղիները:
ե) Ովքե՞ր և ի՞նչ քայլեր ձեռնարկեցին:
զ) Ի՞նչ ադյունքի հասան:

19. Հորինի՛ր նոր պատում՝ փոխելով դիպաշարի զարգացման ընթացքը:
20. Տվյալ հատվածում մատնանշիր լեզվաոճական այն միջոցները, որով գրողը պատմական կոլորիտ է ստեղծել.

Արան ասում է.
Ով ազնիվ Նիրար,
Վերադարձի՛ր Նինվե և պատասխանս տար
Սենաարի աշխարհափայլ արեգակին:
Ասա, սառույցըս միայն կեղևն է արտաքին՝
Ներսից երկու սիրո բոցեր են գալարվում
Եվ ինչպես գետը ծեր Մասյաց անդունդներում՝
Արտասուքները ողողում են իմ հոգին...

Վ. Սուրենյանց
Շամիրամը Արայի դիակի մոտ

21. Ինչպե՞ս կմեկնաբանես *«Ներսից երկու սիրո բոցեր են գալարվում»* միտքը:
22. Ողբերգության որևէ արարի համար երաժշտությո՛ւն ընտրիր, հիմնավորի՛ր ընտրությունդ:
23. Կարծի՛ք հայտնիր այն մասին, թե արդյոք ճիշտ ես համարում Արայի որոշումը: Հիմնավորի՛ր տեսակետդ համապատասխան հատվածներից բերված օրինակներով:
24. Պատրաստի՛ր զեկուցում՝ *«Արա Գեղեցիկի պաշտամունքը»* թեմայով: Նույն թեմայով պատրաստի՛ր սահիկաշար:

Քննարկում

Դասընկերներիդ հետ քննարկի՛ր, թե ինչ կլիներ, եթե Արան ընդուներ Շամիրամի առաջարկը: